

ԶՈՒՐՃԱԼԻՔ

Վ Ա Ս Ն Թ Ո Ւ Թ Ո Ւ Ն Ի¹
(Պարսաւ)

Թէ հարցանեմք ի Սուրբ Գրոյն
Գարշ և զագիր ասէ զթութուն,
Որպէս մեղուն փաղշի ի ծխոյն,
Նոյնպէս հրեշտակն (յ)այն պիղծ հոտոյն:

Ով ոք սովոր է ի թութուն
Բազում փնաս զործէ հոգոյն,
Վնաս հոգոյն և վիշտ մարմնոյն
Ձեռքն աւեր առնէ զիւր տունն:

Շատ մարդ շիւար կանւերերուն.
Ոչ ինչ ունին ի տան յանկիւն.
Փող մի չունին ուր տան հոգոյն.
Երթան պարտօք գնեն թութուն:

Ոմանք նմանին ի քաղցեալ շուն,
Որ կու շրջին ի տանէ տուն.
Հոտ հանելով գտուն (?) զթութուն:
Զմոխիւրն տան վեր իւր զլիւոյն:

Ոմանք սովոր են խմելուն,
Որպէս ըզորդ լինին անքուն.
Զտիւ և զգիշեր առաւօտուն
Ոչ զաղարեն խմեն զթութուն:

Սիրտն սեպեւր է ի մէջ փորուն,
Հոգին զրկեալ է ի լուսոյն.
Բնաւ չյիշէ նա զԲ մահուն
Եւ ոչ խնդրէ յարքայութիւն:

1. Գրուածքիս հեղինակն ու թուականը անյայտ է, սակայն ոչ ոչ քան 1678 ըլլալու է, վասն զի զայն պարունակող Ռսկէփորիկին մէկ ուրիշ էջին վրայ՝ ստաւոյնքն բոլորէ կնիքին մէջ Նշանակուած կայ հետեւեալը. «Յիսուսի Քրիստոսի Ծն. Անոր վրդ. Գալէնկոյի Թվ. ՌձիԲ. է»։ Զ. Բ. Սարգիսեան իր Մայր Յռցակ Հայ Զեռագրաբն մէջ զայս թուած ասան՝ կ'ըսէ ի փակագծի. «Հաւանօրէն վերջին ստացոյն է այս»։ Ծ. Խ.

Շատ մարդ հպարտ նորա սիրոյն՝
Զապրանքն կեր կուտայ հրոյն.
Գողնայ ի տանէն և գնէ թութուն,
Երթայ խմէ հետ շնեւոյն:

Ծուխ կու հանեն ի քթերոյն,
Որպէս զսև օձ ի բերանոյն.
Վայ հազար նոցայ հոգոյն,
Որ կատարեն զկամքն դիւոյն:

Ոմանք նստին ի մէջ սեղանոյն.
Յառաջ բերեն նոքայ զթութունն.
Յօժար խմեն հետ քրթերուն.
Բերնով շնան հետ ալազգոյն:

Թէ ոք դառնայ ի չար զործոյն,
Ի շնանալոյն և ի քֆրոյն,
Ի այլ ոչ խմէ ինքն թութուն,
Փութով գտանէ զթողութիւն:

Սիրով ցանկայ ազօթելոյն,
Ի ողորմութիւն տայ որբերոյն.
Նա ազատի անշէջ հրոյն
Եւ ժառանգէ զյարքայութիւն:

Իսկ թէ անդարձ միայ ի նոյն,
Ոչ գտանէ զթողութիւն.
Այլ կերակուր լինի որդուն
Զոր սնուցին խղմելով զթութունն:

Բայց դուք որդիք արքայութեան,
Մի առնէք զձեզ տուն չարութեան.
Խմելով զթութունն զազրութեան
Ի անմաս մնալ հաղորդութեան:

Այլ աւրհնութիւնն աստուածական
Լիցի ի յայն մարդուն վերայն,
Որ շուտ դառնայ յայն չարութեան
Խնդրող լինի յարքայութեանն ամէն:

ՌՍԿԵՓՈՐԻԿ